ԱԳԱՐԱԿԻ ԺԱՅՌԱՓՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մ. Փ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայկական լեռնաշխարհը՝ մարդկային մշակույթի հնագույն բնօրրաններից մեկը, չափազանց հարուստ է ինքնատիպ ու բազմաբովանդակ ժայռապատկերներով և ժայռափորագրություններով։ Դրանք կարևոր տեղեկություններ են հաղորդում մեր ժողովրդի հնագույն շրջանի հոգևոր և նյութական կյանքի մասին։ Հայաստանի ժայռափորագրություններում առկա է առարկայի ոչ միայն պարզ պատկերը, այլև այդ առարկայի հետ կապված հասկացությունը՝ արտահայտված նշանագրով։ Հայաստանի տեղաբնիկները իրենց մտքերն ու գաղափարները արտահայտում էին նշանագիր-գաղափարագրերով (պիկտոգրամաներով)։ Այդպիսի բազմաթիվ նշանագիր-գաղափարագրեր տարածված են Սյունիքի[1], Գեղամա լեռների[2], Մեծամորի, Արագածի[3]. Արմավիրի[4] ժայռերին, ինչպես և առանձին ժայռաբեկորների, իսկ հետագայում նաև կավե ամանների ու տապանաքարերի վրա։ Հայկական լեռնաշխարհի ժայռափոր նշանագիր-գաղափարագրերի առանձին ուսումնասիրությունները Գեղամա լեռներում, Սյունիքում, Մեծամորում, Արագածի լանջերին մասնագետներին բերել է այն եզրակացության, որ Հայաստանում նշանագրերը լայնորեն օգտագործվել են սկսած մ. թ. ա. VI—IV հազարամյակներից[5]։ Հայկական լեռնաշխարհի ժայռափոր նշանագիր-գաղափարագրերը աչքի են ընկնում իրենց տեղական առանձնահատկությամբ և ընկալելու համար բավականին բարդ են։ Դա բացատրվում է նրանով, ինչպես նշել է Հ. Մարտիրոսյանը, որ դրանց զգալի մասը կես-ժայռանկարային, կես-արձանագրային բնույթ ունեն, իսկ մի մասն էլ լոկ արձանագրային[6]։ Նշանագրեր տարածված են եղել նաև Եգիպտոսում, Կրետեում, Իսպանիայում[7], Մոնղոլիայում, Չինաստանում[8] և այլուր։ Հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. IV հազարամյակի ժայռանկարներում ի հայտ եկող նշանագրերը III հազարամյակում բազմանում են։ Երևան են գալիս գաղափարագրեր, որոնք հետագա զարգացման են հասնում մ. թ. ա. I հազարամյակում[9]։ I հազարամյակում այդ հիերոգլիֆները պատկերված են կավե աղյուսների, մետաղե իրերի, խեցեղեն ամանների, կարասների վրա, դրանցից շատերը ուղեկցվում են նաև սեպագիր համառոտ արձանագրություններով։ Նշանագիր-գաղափարագրերի հարատևության մասին է խոսում միջնադարյան Հայաստանի բազմաթիվ ձեռագիր ցուցակներում դրանց առկայությունը

---

1 Գ. Հ. Կարապետյան, Պ. Գ. Սաֆյան, Սյունիքի ժայռապատկերները (Հայաստանի հնագիտական հուշարձանները, հ. 4, Երևան, 1970, էջ 95)։

2 Հ. Մարտիրոսյան, Գիտությունը սկսվում է նախնադարում (այսուհետև՝ ԳՍՆ), Երևան, 1978, էջ 105, 117։

3 Է. Վ. Խանդաղյան, Կ. Հ. Մկրտչյան, Է. Ս. Պարսամյան, Մեծամոր (այսուհետև՝ Մեծամոր), Երևան, 1973, էջ 152—157, Մ. եպ. Տեր-Մովսեսյան, Արարատի և Արագածի գագաթներին (Արարատ, Էջմիածին, 1913, № 1, էջ 66—67)։

4 Ե. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Երևան, 1931, էջ 169։

5 Գր. Ղափանցյան, Հնության մի քանի հիշատակարաններ (Արարատ, 1914, էջ 93—95), Ե. Սամուելյան, նշվ. աշխ., էջ 160, Ա. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 24, Հ. Մարտիրոսյան, Քարի դարից Ուրարտու, Երևան, 1971, էջ 47։

6 ԳՍՆ, էջ 83։

7 Д. Дирингер, Алфавит, М., 1963, с. 113.

8 Э. А. Новгородова, Мир петроглифов Монголии. М., 1986. с. 34.

9 ԳՍՆ, էջ 83։

համփոփված են «Նշանագիր», «Այս է նշանագիր հայոց ազգի», «Նշանագիր իմաստնոց» ցուցակներում[10]։



Տախտակ. Խաչքարերի գծապատկերներ։

Ժայռափոր նշանագիր-գաղափարագրերի հետաքրքիր խումբ է տարածված Աշտարակի շրջանի Ագարակ և Ոսկեհատ գյուղերի շրջակայքի ժայռերին։ Ագարակի հուշարձանը գտնվում է Ամբերդ գետի արևմտյան ափին։ Այն գրաղեցնում է մոտավորապես 300 քառ/մ տարածություն։ Այդ ժայռագիր փորագրություններում առանձնանում են ցլագլուխ քանդակները, ձկան գլխով վիշապների պատկերները։ Ժայռի ստորին մասում կան քարե բռնակներ (5 հատ)։ Այդ բռնակներից վեր մոտավորապես 65—70 սմ բարձրության վրա փորված են ձվաձև, կլոր, տարբեր չափերի փոսիկներ։ Ժայռի եզրերից արված ակոսները իջնում են դեպի այդ փոսիկները և ցլագլուխ քանդակները։ Ցուլերի եղջյուրներին փորված ակոսներից ջուրը ներքև է հոսել, ներկայացնելով անձրևի խորհրդանշական պատկեր։ Հայկական լեռնաշխարհում ցլագլուխ քանդակներ կան Գեղամա լեռներում, Սյունիքում և այլուր, որոնք մեկնաբանվում են որպես տարերքի ու պտղաբերության գաղափարը մարմնավորող հուշարձաններ[11]։ Ժողովրդական մտածողության մեջ «վիշապ»

10 Այս մասին մանրամասն տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 201—225։
11 ԳՍՆ, էջ 17։

հասկացությունը հանդես է գալիս իբրև փոթորիկ, ամպրոպ ու կայծակ՝ ցուլի, արջառի, ձկան և այլ կերպարանափոխումներով, որը կապվում է տարերքի խոլ ուժերի և պտղաբերության երևույթների հետ[12]։

Ագարակի ժայռակերտ քանդակները, անշուշտ, կրոնապաշտամունքային հմայական բնույթի կոմպոզիցիոն պատկերներ են և արտահայտում են պտղաբերման, բուսական աշխարհի վերակենդանացման, հարատևման, բարգավաճման գաղափարը՝ կապված ջրի, հատկապես անձրևի պաշտամունքի հետ։ Ջրի, անձրևի պաշտամունքին նվիրված ծիսական արարողությունների մեջ եղել է անասուններ զոհաբերելու սովորություն։ Զոհաբերվող կենդանուն կապել են ժայռի ստորին մասում փորված բռնակներից։ Այնուհետև, ծիսական արարողություններից հետո կատարվել է զոհաբերությունը։ Հուշարձանում կրոնապաշտամունքային հմայական պատկերները՝ արտահայտված կենդանիների խորհրդանշական պատկերներով և առնչվելով անձրևի պաշտամունքի հետ, արմատներով կապվում են տոտեմական շրջանից եկող կենդանապաշտական (անիմիստական) աշխարհայացքի հետ։



Նկ. 1. Տոմարական հաշվումների հետ կապված փորագրություններ։

Կենդանիների սիմվոլիկ պատկերները մատնանշում են արյունակից ցեղախմբերի տոտեմ-կենդանու պաշտամունքը։ Կենդանուն սրբազան համարելով, մ. թ. ա. VI—IV հազարամյակների մարդը դրան գերբնական ուժ էր վերագրում։ Դա գաղտնի, խորհրդավոր զորություն էր, որից կախված էր մարդու կյանքի բարօրությունը։ Այդ երևույթը, նոր քարի դարում (նեոլիթ) խորանալով, սկզբնավորել է աստվածության գաղափարը։ Այսպես՝ հնագույն ժամանակներից ցուլը ճանաչվել է որպես ուժի մարմնավորում, կապվել երկնային ջրերի, պտղաբերության, վերածննդի հետ և աստվածացվելով երկինք է «բարձրացվել», դարձել համաստեղություն՝ որպես երկրագործությունը հովանավորող, պտղաբերող աստվածություն[13]։ Հայ ժողովրդի և հին արևելյան շատ ժողովուրդների համար ցուլը եղել է նաև կայծակի ու որոտի

12 Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 85—86, Հ. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 34։

13 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 77, Մեծամոր, էջ 119։

աստծու խորհրդանիշներից մեկը, որն իր եղջյուրներով պատառոտել է չար ամպերը, անձրև թափել երկրի վրա[14]։

Ագարակի ցլաքանդակները զուգորդված են տիեզերական պատկերների հետ և, անշուշտ, խորհրդանշում են ցուլի համաստեղությունը։ Ընդհանրապես խոյը, եզը, առյուծը, ինչպես և ցուլը դասվել են կենդանակերպի տասներկու նշանների կարգին։ Դրանց հետ կապված են առասպելական պատկերացումներ։ Ցուլը առնչվել է գարնան երկրորդ ամսին (ապրիլին)։ Դա այն համաստեղությունն է, որտեղ բնակվում է խոնավության ընծայաբեր աստղ Լուսաբերը կամ Այգաստղը, հետագայում՝ Աստղիկը[15]։ Այդ պաշտամունքի հետ են կապվում ցլի գլխով եղջերագավաթները, որոնց վրա նկատելի են ջրի ալիքանման գծեր[16]։ Եղջերագավաթները լայն տարածում ունեին հատկապես I հազարամյակում։ Միջնադարյան ձեռագրերի աստղագիտական բնույթի աշխատություններում և «կենդանաշրջանի բոլորակներում» երևում է ցուլի պատկերը, իսկ «նշանագրաց ցուցակներում»՝ նրա նշանը։ Անանիա Շիրակացին, օրինակ, գրում է. «Ցուլ» համաստեղությունը իբրև զոդիակի երկրորդ գարնանային աստեղուն, որին եթե հայիս և տեսանես զնոսա յեղջիւր հարեալ գիտես տարին յաւդոյ և յանձրևաց լինի»[17]։

Նկ. 2. Տիեզերական պատկերացումներ արտացոլող փորագրություններ։

Անձրևի գաղափարը կապված է եղել նաև «ձուկ» հասկացության հետ, որի մասին տեղեկություն է տալիս դարձյալ Ա. Շիրակացին. «Ձուկ աստեղք հինգ, մինչ յորդ անձրևաց նշանակիչ»[18]։

Շանթ-ամպրոպ-անձրևի գաղափարը, որ արտահայտված է կենդանիների խորհրդանշական պատկերներով, առկա է նաև մի քանի բրոնզե գոտինե-

14 Մեծամոր, էջ 203։

15 Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 328, Բ. Առաքելյան, Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության, Երևան, 1976, էջ 51։

16 Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 51։

17 Ա. Աբրահամյան, Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 331։

18 Նույն տեղում, էջ 332։

ում՝ գտնված Սամթավրոյի ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջանի (մ. թ. ա. XI—X դդ.) դամբարաններից[19]։ Այս գոտիների վրա փայլակ զարդափարանիշը կրող իրար եղջյուրահարող եղջերուները խորհրդանշում են ապոտպ-կայծակը, որին հետևում է անձրևը՝ մարմնավորված ձկան պատկերով[20]։ Ջրի պաշտամունքը, երկնային այլ և այլ երևույթները՝ արտահայտված կենդանիների խորհրդանշական պատկերներով, հաստատում են նաև Շիրակավանի մ. թ. ա. I հազարամյակի առաջին քառորդին պատկանող (№ 10, 11) դամբարաններից գտնված բրոնզե գոտիները[21]։

Պտղաբերող անձրև առաջացնելու հավատալիքների վերապրուկները նկատվում են նաև հետագա դարերում։ Սուրբ են համարվել «ծակ» ժայռերը, քարայրները, որտեղ կատարվել են զանազան պաշտամունքային ծեսեր՝ կապված բարեբերության, պտղաբերության պաշտամունքի հետ[22]։ Նման նշանակություն են ունեցել նաև «ցասման» խաչքարերը, որոնք կանգնեցվել են բնակատեղիներին մոտիկ, բարձր բլուրների վրա։ Այդ խաչքարերին զոհաբերություններ են արվել, որպեսզի անձրև գա[23]։ Այդպիսի խաչքարեր կան Վայոց ձորում, Սևանի ավազանում, Անիի և Թումանյանի շրջաններում[24]։ Զոհաբերության այս սովորույթը, իհարկե շատ էր տարածված հեթանոսության շրջանում։ Նարի (ջրի և պտղաբերության աստվածուհու) և Անահիտի (պտղաբերության, արգասավորության և մայրության աստվածուհու) արձանները շրջել են ամեն կողմ, նրանց վրա ջուր են հեղել, զոհեր մատուցել, որպեսզի անձրև գա[25]։

Ագարակի հուշարձանի պատկերախմբերի համեմատությունը Մեծամորի, Գեղամա լեռների (Շեյխի Չինգիլի), Վարդենիսի լեռների պատկերախմբերի հետ ցույց է տալիս, որ Ագարակը նմանատիպ հուշարձան է և պաշտամունքային բնույթին զուգահեռ ունի աստղագիտական և տոմարագիտական նշանակություն։

Հայկական լեռնաշխարհի ժայռային բարձունքների վրա կառուցված հնագույն սրբատեղիները եղել են նաև երկնային լուսատուների դիտարկումների վայր։ Այդ մասին է խոսում աստղագիտական, տոմարագիտական բազմաթիվ նշանագրերի առկայությունը այդ ժայռեղեն զանգվածների վրա։ Հայ հին մատենագրության մեջ տիեզերագիտական, տոմարագիտական բնույթի աշխատություններում օգտագործված նշանագրերը ոչնչով չեն տարբերվում մեր ժայռերին դրոշմված տիեզերագիտական, տոմարագիտական գաղափարանշաններից։ Ընդհանուր առմամբ հայ մատենագրությունում օգտագործված այդպիսի նշանագրերը նմանություն ունեն շատ ժողովուրդների մատենագրություններում գործածված համապատասխան գաղափարանշանների հետ։ Հայկական այս նշանագրությունը համընկնում է հատկապես հունական նշանագրության հետ[26]։

Ագարակի նշանագիր-գաղափարագրերը տարածված են ինչպես ժայռի հարթ մակերեսին, այնպես էլ եզրերին, ճակատին։ Ժայռի եզրերին, արևելյան տարածքում փորագրված նշանները զգալի նմանություն ունեն Մեծամորի փոքր բլուրի աստղագիտական առաջին հարթակի տիեզերական պատկերագրությունների հետ։ Ժայռի հարավ-արևելքից փորված են հինգ աստի-

---

19 Հ. Ռ. Իսրայելյան, Երկվորյակների պաշտամունքի հետքերը հին Հայաստանում (Պատմա-բանասիրական հանդես, 1980, № 3, էջ 222)։

20 Նույն տեղում, էջ 223։

21 Ռ. Մ. Թորոսյան, Օ. Ս. Ենկիկյան, Լ. Ա. Պետրոսյան, Շիրակավանի դամբարանները (Պատմա-բանասիրական հանդես, 1980, № 2, էջ 275)։

22 Ե. Սամուելյան, նշվ. աշխ., էջ 290, 295։

23 Գ. Սրվանձտյանց, Գրոց ու բրոց, Կ. Պոլիս, 1910, էջ 76։

24 Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, IX—XIII դդ. խաչքարերը, Երևան, 1984, էջ 63։

25 Կ. Մելիք-Փաշայան, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963, էջ 30—31։

26 Ա. Աբրահամյան, Հայոց դիր և գրություն, էջ 236։

ճաններ։ Երրորդ աստիճանի վրա փորագրված երկու կլոր փոսիկները միացած են գծիկով (տախտակ, գծ. 1)։ Այս փորագրությունը ժայռային հարթության տարբեր պատկերախմբերում կրկնվում է մի քանի անգամ։ Այն դիտվում է նաև Գեղամա լեռների, Սյունիքի, Մեծամորի ժայռափորագրություններում և մեկնաբանվել է որպես «երկինք» գաղափարագիր[27] (գծ. 2)։ Հայ հին մատենագրության մեջ օգտագործված աստղագիտական բովանդակությամբ գաղափարագրերում այն նշանակում է «հակակցություն», «հակադրություն», երբ լուսատուների դեմ-դիմաց գտնվելը, հեռավորությունը նրանց միջև 180° է[28]։ Հայկական հիերոգլիֆ նշաններում այն նշանակում է «երկինք»[29]։ Ագարակի ժայռափորագրություններում հանդիպում է «երկինք» գաղափարագրի մի այլ տարբերակ ևս՝ շրջանագիծ՝ վերև ուղղված գծիկով։ Կա նաև «երկիր» գաղափարագիրը. շրջանագիծ՝ ներքև ուղղված գծիկով։ Հայկական հիերոգլիֆ նշանագրերում (գծ. 3) և հմայագրերում (գծ. 4) այս պատկերների դիմաց նշված են «երկիր» և «երկինք» հասկացությունները[30]։ «Երկիր» և «երկինք» գաղափարագրերի նման ձևերը հանդիպում են նաև Մեծամորի, Սյունիքի, Գեղամա լեռների ժայռափորագրություններում[31]։ Հետաքրքիր է, որ «երկինք» գաղափարագիրը մի դեպքում հանդես է գալիս առանձին շրջանակով, մի այլ դեպքում՝ երկու միացած շրջանակներով։ Հավանորեն այս պատկերները արտահայտում են «երկիր» և «երկինք» հասկացության տարբեր իրավիճակները։

Գաղափարագրերի վերծանման բանալի կարող է ծառայել հնագույն դիցաբանությունը։ Աշխարհի հնագույն ժողովուրդների՝ շումերական, հունական, հնդկական, եգիպտական և այլ դիցաբանություններում տեսնում ենք աշխարհաստեղծման միևնույն ըմբռնումը։ Ուշադրության է արժանի դրանցում արտահայտված համանման մտածողությունը։ Նախապես եղել է քաոս, ապա այն տրոհվել է երկու մասի՝ երկնքի և երկրի, վերևի և ներքևի[32]։ Նույն պատկերացումները հանդիպում են նաև հայկական ավանդագրույցներում[33]։ Հայկական լեռնաշխարհի մ. թ. ա. III հազարամյակի գրեթե բոլոր ժայռափորագրություններում ի հայտ եկող գծիկով իրար միացած շրջանակները, անշուշտ, արտահայտում են երկրի և երկնքի նախագծի վիճակը, իսկ առանձին շրջանակներով ցույց տրվածները՝ արդեն իրարից անջատված վիճակներն են։ Քաոսը տրոհվել է երկու մասի՝ երկրի և երկնքի, որոնք իրենց հերթին տրոհվել են առանձին տարրերի՝ ստեղծելով կյանքի գոյության պայմանները։ Նույն գաղափարը մի փոքր այլ ձևով արտահայտված է հայկական մանրանկարչության մեջ։ Հայկական զարդարվեստում շրջագծով, գնդով արտահայտված հատիկի գաղափարը խորհրդանշում է կյանքի նախասկիզբը[34]։ Հատիկի գաղափարը արտահայտող շրջագծերը, գնդերը բաժանվում են չորս մասի (չորս գնդերի)՝ արտահայտելով կյանքի հետ կապված չորս տարրերի (հող, ջուր, օդ, արև) հասկացությունը[35]։ Հողը և ջուրը խորհրդանշում են երկիրը, իսկ օդը և արևը՝ երկինքը։

Հայ հնագույն փիլիսոփայական աշխատություններում երկրին վերաբերող հարցերում նկատելի է նույն մտածելակերպը։ Երկիրը կազմված է եր-

---

27 ԳՍՆ, էջ 88, աղ. VIII, նկ. 22, էջ 131, աղ. XXVIII։

28 Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, Երևան, 1966, էջ 362։

29 Ա. Արրահամյան, Հայոց գիր և գրություն, էջ 238։

30 Նույն տեղում, էջ 231։

31 ԳՍՆ, էջ 131, 145։

32 Д. Г. Редер, Мифы и легенды древнего Двуречья, М., 1965, с. 23—24; С. С. Аверинцев, Вода (Мифы народов мира, т. I, М., 1980, с. 240).

33 Գ. Սրվանձտյանց, Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի գուռ, Կ. Պոլիս, 1874, էջ 107—110։

34 Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստը, Երևան, 1955, էջ 142։

35 Նույն տեղում, էջ 147։

կու կիսագնդերից՝ ներքին և վերին, որոնք գտնվում են դեմ առ դեմ[36]։ Բոլոր մարմինների հիմքը չորս տարրերն են՝ կրակ, օդ, հող, ջուր[37]։ Ուշագրավ է, որ Ագարակի ժայռափորագրություններում պատկերախմբերը մեծամասնությամբ փորված են կլոր շրջանակների ձևով։ Հաճախակի հանդիպում է փոքր խորություն ունեցող կլոր շրջանը, որի շուրջը դասավորված են երեք, չորս և այլ քանակի ավելի փոքր շրջանակներ։ Առանձին հասկացություններ արտահայտված են դեմ առ դեմ փսրված մեծ, միջին, փոքր շրջանակներով, որոնք կարող են իրար միացած լինել գծիկով։

Առանձնապես հետաքրքիր է ժայռի հարավ-արևելքի եզրի ինքնատիպ փորագրությունը։ Քառակուսի, փոքր փորված ակոսը որոշ հեռավորության վրա միանում է ավազանի ներքևի փոսիկին։ Սրանից առանձին ակոսներ են գնում դեպի ժայռի եզրին փորված կլոր փոսիկները, որոնք իրար միացած են դարձյալ ակոսագծերով։ Ջրավազանից փոքր-ինչ հեռու երևում է մի հետաքրքիր փորագրություն ևս։ Գծված են երկու շրջանակ։ Առաջինից ակոսներով առանձնանում են երկու, երկրորդից՝ մեկ, կլոր փոսիկավոր շրջանակներ։ Վերջիններս գծիկներով կապված են միմյանց։ Այս շրջանակներից էլ ակոսներ են տարված դեպի ժայռի ճակատի քանդակները, որոնք խիստ մաշված են։ Ամենայն հավանականությամբ այստեղ արտահայտված է բաժանման գաղափարը։ Մեկ տարրից տրոհվել են երկու մասնիկներ, որոնք դարձյալ տրոհելի են (ակոսը)։ Շրջանակները կախված են մեկը մյուսից, մեկը մյուսով պայմանավորված։ Ժայռի հյուսիսային տարածքում նույն գաղափարն արտահայտվում է մի փոքր այլ կերպ։ Հինգ ուղղանկյուն փորվածքները ակոսներով միանում են ժայռի եզրի ակոսին, որն էլ իջնում է մինչև ժայռի ճակատի փորագրությունները։

Հետաքրքիր խումբ են ներկայացնում ժայռակերտ, կլոր, հորի շուրջը համաչափությամբ փորված, շրջանաձև, մանր փոսիկները։ Դրանցից մի քանիսը նման են աստղաբույլերի։ Նման փոսիկներ արված են ինչպես քառակուսի հորի, այնպես էլ հարավ-արևելքում փորված ջրավազանի շուրջը։ Ժայռի եզրին, արևելյան կողմում հորիզոնական կանոնավոր շարքով փորված տասներեք կլոր, մանր փոսիկները (նկ. 1) հավանորեն կապվում են տոմարական հաշվումների և տարվա ամիսների հետ։ Սրանից փոքր ինչ հեռու արված (նկ. 2) ավելի մեծ և կլոր 7 փոսիկներն արտացոլում են տիեզերական պատկերացումներ և առնչվում են մոլորակային (7) համակարգության հետ։ Հայկական լեռնաշխարհի ժայռափորագրություններում հաճախակի են հանդիպում 4, 5, 7, 11, 13 և այլ թվերով փորված շրջանակներ։ Դրանք կապվում են տոմարական հաշվումների, տիեզերական պատկերացումների հետ և խորհրդանշում են աստղերն ու մոլորակները[38]։

Ինքնատիպ բազմաթիվ փորագրություններ կան ժայռի արևմտյան տարածքում։ Օրինակ, ժայռի վերին մասում դեմ-դիմաց փորված են չորս կլոր փոսիկներ (գծ. 5)։ Կարծում ենք, այս պատկերի համադրությունը մեր վաղեմի խաչքարերի (VII—IX դդ.) հետ զարմանալի նմանություն է ի հայտ բերում։ Այն, կարծես, իր ընդօրինակումն է գտել Վայքի շրջանի Կարմրաշեն գյուղից գտնված խաչքարում (գծ. 6)։ Խաչը պատկերված է չորս կլոր շրջանակներով։ Մեր վաղեմի խաչքարերի, առանձնապես տիեզերական պատկերացումներին առնչվող խաչքարերի, զարդամոտիվների արմատները, կարծես, գտնում ենք ժայռափորագրված պատկերներում։ Ագարակի հարավ-արևելյան տարածքի ժայռափոր պատկերախմբի գաղափարը երևում է Թալինի շրջանի IX դ. կլոր խաչքարում, որի զարդամոտիվները դարձյալ կապվում են տիեզերական պատկերացումների հետ[39]։ Խաչի մեջտեղը կլոր շրջանակ է։ Թևերի վրա կան ավելի փոքր նույնպիսի շրջանակներ։ Դրանք հյուս-

---

36 Ա. Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1979, էջ 67։

37 Նույն տեղում, էջ 67։

38 Դմն, էջ 142։

39 А. Якобсон, Армянские хачкары, Ереван. 1986. с. 16.

վածքով միացած են խաչի կենտրոնի շրջանակին։ Պարզ նկատվում է տրոհման գաղափարը։ Ընդհանրապես ժայռափորագրություններում խաչը (նաև սվաստիկան) հանդես է եկել որպես արևի սիմվոլ և խորհրդանշել է հավերժություն, իսկ շրջանաձև գնդիկները՝ աստղեր, մոլորակներ[40]։ Խաչի այս պատկերը խորհրդանշում է տիեզերքը (երկինքը), իսկ նրանից դուրս փորագրված ռուսական զարդամոտիվները՝ կյանքը, աշխարհը։ Այս երկուսը պատկերված են իրար հանդեպ և պայմանավորված են մեկը մյուսով։ Համարյա նույն պատկերավորումները երևում են Մարտունու շրջանի Ներքին Գետաշեն (X դ.) և Զորագյուղ (X—XI դդ.) գյուղերի խաչքարերում (գծ. 7, 8)։

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Ագարակի ժայռակերտ կառույցը, հնագույն սրբատեղի լինելով, միաժամանակ ունեցել է աստղագիտական, տոմարագիտական նշանակություն։ Այդ ժայռեղեն զանգվածի վրա արված փորագրություններում (մ. թ. ա. VI—IV հազ.) առկա նշանագիրգաղափարագրերն առավել զարգացման են հասել մ. թ. ա. III—I հազարամյակներում։ Դրանք հարատևել են նաև հետագա դարերում, ընդհուպ մինչև միջնադարյան «ձեռագրաց ցուցակները» և վաղ խաչքարային արվեստը։

НАСКАЛЬНЫЕ ИЗОБРАЖЕНИЯ АГАРАКА

М. П. ОГАНИСЯН

Резюме

Иероглифические наскальные надписи Армении, сделанные в VI—IV тыс. до н. э., были распространены в третьем тысячелетии, при этом появились новые иероглифические и идеографические надписи, которые усовершенствовались в I тысячелетии до н. э.

Интересная коллекция идеографических надписей, оставленных на скалах близ селения Агарак Аштаракского района Армении, связана с астрономией, летосчислением, космическими изображениями и имеет религиозную значиость.

ROCK CARVINGS OF AGARAK

M. P. HOVHANNISIAN

Summary

The hieroglyphic rock inscriptions of Armenia, made during the 6th 4th centuries B. C. were widespread in the third century, in the meanime there appeared new hieroglyphic and ideographic inscriptions which got accomplished in the first century B. C.

An interesting collection of ideographic inscriptions situated on the rocky heights of settlement of Agarak in the District of Ashtarak in Armenia, having to do with astronomy, chronology and cosmic images, possesses religious significance.

---

40 ԳՍՆ, էջ 120, 142։